«ՀԱԷԿ» ՓԲԸ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՏՈՒՐԲԻՆԱՅԻՆ ԱՐՏԱԴՐԱՄԱՍԻՑ ԵՎ ԿԱՅԱՆԻՆ ԿԻՑ ՀԱՆԳՈՒՅՑԻՑ ԱՊԱՄՈՆՏԱԺՎԱԾ ԳԵՐԾԱՆՐ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ՊԱՀԵՍՏ ՏԵՂԱՓՈԽՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՏՈՒՑՄԱՆ ԳՆՄԱՆ

ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N 03/01

«ՀԱԷԿ-ԲՄԾՁԲ-5/17»

ՀԱԷԿ ՓԲԸ ЗАО «ААЭК»
(ԳԲԲ) 03/01 (ОЗП)
Գնման ընթացակարգերի բաժին
Отдел закупочных процедур
«26» «03» 2018թ.

ք. Մեծամոր

«ՀԱԷԿ» ՓԲԸ-ն, ի դեմս գլխավոր տնօրեն Մովսես Վարդանյանի, որը գործում է կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և

«Հիդրոէլեկտրամոնտաժ» ՓԲԸ-ն, ի դեմս տնօրեն Սահակ Բաբոյանի, որը գործում է կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է **«ՀԱԷԿ» ՓԲԸ տուրբինային արտադրամասից և կայանին կից հանգույցից ապամոնտաժված գերծանր սարքավորումների պահեստ տեղափոխման** ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N1 Հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N1 Հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 Հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 Հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.1.4 Կատարողից պահանջել փոխհատուցել Հավելված 1.1-ով նախատեսված բեռների բեռնման, բեռնաթափման և տեղափոխման ժամանակ կատարողի մեղքով առաջացած վնասները:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.2.3 Ողջամիտ ժամկետում տեղյակ պահել ՀՀ ԱԱԾ կողմից ՀՀ կառավարության թիվ 744-Ն առ 09.06.2005թ ընդունած որոշման հիման վրա ատոմային էներգիայի անվտանգության տեսակետից կարևոր օբյեկտներում աշխատանքներ իրականացնող անձանց հուսալիության ստուգման պատասխանների արդյունքների վերաբերյալ և դրական եզրակացության դեպքում տրամադրել անցագրեր:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 Հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

2.4.4 Աշխատանքները սկսելուց 40 (քառասուն) օր առաջ Պատվիրատուին ներկայացնել ՀՀ ԱԱԾ կողմից ՀՀ կառավարության թիվ 744-Ն առ 09.06.2005թ ընդունած որոշման հիման վրա ատոմային էներգիայի անվտանգության տեսակետից կարևոր օբյեկտներում աշխատանքներ իրականացնող անձանց հուսալիության ստուգման համար անհրաժեշտ փաստաթղթերը:

2.4.5 Պահպանել ՀԱԷԿ-ում գործող ներօբյեկտային և անցագրային ռեժիմի բոլոր պահանջները:

2.4.6 Փոխհատուցել Հավելված 1.1-ով նախատեսված բեռների բեռնման, բեռնաթափման և տեղափոխման ժամանակ կատարողի մեղքով առաջացած վնասները:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (Հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (Հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 7 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է **117120000 (հարյուր տասնյոթ միլիոն մեկ հարյուր քսան հազար)** ՀՀ դրամ, ներառյալ **ԱԱՀ-19520000** ՀՀ դրամ:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 Հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

Հավելված N 1
«26» «01» 2018թ. կնքված
«ՀԱԷԿ-ԲՄԾՁԲ-5/17» ծածկագրով
N 03/01 պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության							
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	մատուցման	
						հասցեն	ժամկետը**
1	63111200	Տեղափոխման ենթակա սարքավորումները պետք է անվտանգ և ապահով բեռնել և տեղափոխել «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի տուրբինային արտադրամասից պահեստ՝ պահեստում բեռնաթափել, ինչպես նաև որոշ սարքավորումների մասով կատարել նույն աշխատանքը հակառակ ուղղությամբ (պահեստից տուրբինակին արտադրամաս): Տեղափոխումը կատարվելու է բետոնե ճանապարհով՝ 1300 մետր: Սարքավորումների ամրացումը Կատարողի տրանսպորտային միջոցների վրա, տեղափոխումը Պատվիրատուի կողմից նշված վայր և բեռնաթափումը իրականացնում է Կատարողը՝ իր աշխատանքային ռեսուրսների, տեխնիկական միջոցների և հատուկ հարմարանքների միջոցով, նախօրոք կազմված և Պատվիրատուի հետ համաձայնեցրած սխեմայի հիման վրա: Տեղափոխվող սարքավորումների ցուցակը զանգվածներով, գաբարիտային չափսերով, ժամկետներով, բեռնման, բեռնաթափման և տեղափոխման համար սարքավորումների տրամադրման	լրակազմ	117 120 000	1	ՀՀ, Արմավիրի մարզ, ք. Մեծամոր, «ՀԱԷԿ» ՓԲԸ	Ծառայության մատուցման ժամկետները ներկայացվում են Հավելված 1.1-ով (կցվում է)

		պայմաններով և այլ մանրամասնություններ ներկայացված են Հավելված 1.1-ով (կցվում է):					

*Ծառայության մատուցման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան **31-ը օգոստոս 2019թ**:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
«ՀԱԷԿ» ՓԲԸ

..... Մ. Վարդանյան
Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ
«Հիդրոէլեկտրամոնտաժ» ՓԲԸ

..... Ս. Բաբոյան
Կ.Տ.

Հավելված N 1.1
«26» «01» 2018թ. կնքված
«ՀԱԷԿ-ԲՄԾՁԲ-5/17» ծածկագրով
N 03/01 պայմանագրի

ՏԵՂԱՓՈԽՎՈՂ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ԳԱԲԱՐԻՏԱՅԻՆ ՉԱՓՍԵՐԸ, ՔԱՇԸ, ՆԱԽՆԱԿԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ, ՔԱՆԱԿԸ ԵՎ ՏԵՂԱՓՈԽՄԱՆ ԱՐԺԵՔԸ

հ/հ	Սարքավորման անվանումը	Աշխատանքի անվանումը	Սարքավորումների գաբարիտային չափսերը	Սարքավորումների քաշը	Քանակը և կատարման ժամկետները			ընդ.-ր քանակը	Աշխատանքի արժեքը մեկ միավորի համար հազ. դրամ ներառյալ ԱԱՀ	Աշխատանքի ընդհանուր արժեքը ներառյալ հարկերը հազ. դրամ ներառյալ ԱԱՀ	Անհրաժեշտ մեխանիզմը տրամադրում է
					2017	2018	2019				
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12
1	Գեներատորի ռոտոր	Բեռնում	Երկարությունը 10010մմ	43,00 տ		2 հատ՝ մարտ, 1 հատ հունիս		3 հատ	120	360	ՀԱԷԿ
2		Տեղափոխում	Երկարությունը 10010մմ	43,00 տ		2 հատ՝ մարտ, 1 հատ հունիս		3 հատ	650	1950	կապալառու
3		Բեռնաթափում	Երկարությունը 10010 մմ	43,00 տ		2 հատ՝ մարտ, 1 հատ հունիս		3 հատ	900	2700	կապալառու
4	Գեներատորի ստատոր	Բեռնում	Երկարությունը 6580 մմ Լայնությունը 4400 մմ Բարձրությունը	170,0 տ		2 հատ մարտ		2 հատ	480	960	ՀԱԷԿ

			4790 մմ								
5		Տեղափոխում	Երկարությունը 6580 մմ Լայնությունը 4400 մմ Բարձրությունը 4790 մմ	170,0 տ		2 հատ մարտ		2 հատ	25500	51000	կապալառու
6		Բեռնաթափում	Երկարությունը 6580 մմ Լայնությունը 4400 մմ Բարձրությունը 4790 մմ	170,0 տ		2 հատ մարտ		2 հատ	5000	10000	կապալառու
7		Բեռնաթափում *, տեղափոխում մինչև 4 մետր	Երկարությունը 6580 մմ Լայնությունը 4400 մմ Բարձրությունը 4790 մմ	170,0 տ	1 հատ նոյեմբեր			1 հատ	6000	6000	կապալառու
8		Տեղափոխում մինչև 4 մետր	Երկարությունը 6580 մմ Լայնությունը 4400 մմ Բարձրությունը 4790 մմ	170,0 տ		1 հատ հուլիս		1 հատ	5000	5000	կապալառու
9	ՑՃԳ-1-ի ռոտոր	Բեռնում	Երկարությունը 6550 մմ Տրամագիծը 3200 մմ	33,00տ		1 հատ հուլիս	1 հատ հունիս	2 հատ	70	140	ՀԱԷԿ
10		Տեղափոխում	Երկարությունը 6550 մմ Տրամագիծը 3200 մմ	33,00տ		1 հատ հուլիս	1 հատ հունիս	2 հատ	400	800	կապալառու
11		Բեռնաթափում	Երկարությունը 6550 մմ Տրամագիծը 3200 մմ	33,00տ		1 հատ հուլիս	1 հատ հունիս	2 հատ	450	900	կապալառու

12		Բեռնում	Երկարությունը 6550 մմ Տրամագիծը 3200 մմ	33,33տ		1 հատ՝ հուլիս, 1 հատ մարտ	1 հատ հունիս	3 հատ	70	210	ՀԱԷԿ
13	ՑՃԳ-2-ի ռոտոր	Տեղափոխում	Երկարությունը 6550 մմ Տրամագիծը 3200 մմ	33,33տ		1 հատ՝ հուլիս, 1 հատ մարտ	1 հատ հունիս	3 հատ	400	1200	կապալառու
14		Բեռնաթափում	Երկարությունը 6550 մմ Տրամագիծը 3200 մմ	33,33տ		1 հատ՝ հուլիս, 1 հատ մարտ	1 հատ հունիս	3 հատ	450	1350	կապալառու
15		Բեռնում	Երկարությունը 4230 մմ Լայնությունը 5470 մմ Բարձրությունը 2500 մմ	28,00տ		1 հատ հուլիս	1 հատ հունիս-հուլիս	2 հատ	60	120	ՀԱԷԿ
16	ՑՃԳ-1-ի պահունակ	Տեղափոխում	Երկարությունը 4230 մմ Լայնությունը 5470 մմ Բարձրությունը 2500 մմ	28,00տ		1 հատ հուլիս	1 հատ հունիս-հուլիս	2 հատ	290	580	կապալառու
17		Բեռնաթափում	Երկարությունը 4230 մմ Լայնությունը 5470 մմ Բարձրությունը 2500 մմ	28,00տ		1 հատ հուլիս	1 հատ հունիս-հուլիս	2 հատ	50	100	ՀԱԷԿ
18	ՑՃԳ-2-ի պահունակ	Բեռնում	Երկարությունը 4230 մմ Լայնությունը 5470 մմ Բարձրությունը 2500 մմ	28,00տ		1 հատ հուլիս	1 հատ հունիս-հուլիս	2 հատ	60	120	ՀԱԷԿ
19		Տեղափոխում	Երկարությունը	28,00տ		1 հատ	1 հատ	2 հատ	290	580	կապալառու

			4230 մմ Լայնությունը 5470 մմ Բարձրությունը 2500 մմ			հուլիս	հունիս- հուլիս				
20		Բեռնաթափում	Երկարությունը 4230 մմ Լայնությունը 5470 մմ Բարձրությունը 2500 մմ	28,00տ		1 հատ հուլիս	1 հատ հունիս- հուլիս	2 հատ	50	100	ՀԱԷԿ
21	ԲՃԳ իրանի վերին մաս	Բեռնում	Երկարությունը 4135 մմ Լայնությունը 3720 մմ Բարձրությունը 1920 մմ	21,70տ		1 հատ հունիս- հուլիս	1 հատ հունիս- հուլիս	2 հատ	50	100	ՀԱԷԿ
22		Տեղափոխում	Երկարությունը 4135 մմ Լայնությունը 3720 մմ Բարձրությունը 1920 մմ	21,70տ		1 հատ հունիս- հուլիս	1 հատ հունիս- հուլիս	2 հատ	260	520	կապալառու
23		Բեռնաթափում	Երկարությունը 4135 մմ Լայնությունը 3720 մմ Բարձրությունը 1920 մմ	21,70տ		1 հատ հունիս- հուլիս	1 հատ հունիս- հուլիս	2 հատ	50	100	ՀԱԷԿ
24	ԲՃԳ իրանի ստորին մաս	Բեռնում	Երկարությունը 4135մմ Լայնությունը 3720մմ Բարձրությունը 1920մմ	14,30տ		1 հատ հունիս- հուլիս	1 հատ հունիս- հուլիս	2 հատ	45	90	ՀԱԷԿ
25		Տեղափոխում	Երկարությունը 4135 մմ	14,30տ		1 հատ հունիս-	1 հատ հունիս-	2 հատ	100	200	կապալառու

			Լայնությունը 3720 մմ Բարձրությունը 1920 մմ			հուլիս	հուլիս				
26		Բեռնաթափում	Երկարությունը 4135 մմ Լայնությունը 3720 մմ Բարձրությունը 1920 մմ	14,30տ		1 հատ հունիս-հուլիս	1 հատ հունիս-հուլիս	2 հատ	40	80	ՀԱԷԿ
27	ԲՃԳ-ի ռոտոր	Բեռնում	Երկարությունը 6550մմ Տրամագիծը 3200մմ	11,88տ		1 հատ հունիս-հուլիս	1 հատ հունիս-հուլիս	2 հատ	40	80	ՀԱԷԿ
28		Տեղափոխում	Երկարությունը 6550 մմ Տրամագիծը 3200 մմ	11,88տ		1 հատ հունիս-հուլիս	1 հատ հունիս-հուլիս	2 հատ	100	200	կապալառու
29		Բեռնաթափում	Երկարությունը 6550 մմ Տրամագիծը 3200 մմ	11,88տ		1 հատ հունիս-հուլիս	1 հատ հունիս-հուլիս	2 հատ	40	80	ՀԱԷԿ
30	ՍՊՊ-220Մ-ի վերին մաս	Բեռնում	Երկարությունը 6295 մմ Տրամագիծը 3658 մմ	29,40տ		2 հատ մայիս 2 հատ հունիս-հուլիս		4 հատ	80	320	ՀԱԷԿ
31		Տեղափոխում	Երկարությունը 6295 մմ Տրամագիծը 3658 մմ	29,40տ		2 հատ մայիս 2 հատ հունիս-հուլիս		4 հատ	450	1800	կապալառու
32		Բեռնաթափում	Երկարությունը 6295 մմ Տրամագիծը 3658 մմ	29,40տ		2 հատ մայիս 2 հատ հունիս-հուլիս		4 հատ	50	200	ՀԱԷԿ

33	СПП-220М-ի ստորին մաս	Բեռնում	Երկարությունը 7685 մմ Տրամագիծը 3658 մմ	77,60տ		2 հատ մայիս 2 հատ հունիս		4 հատ	480	1920	ՀԱԷԿ
34		Տեղափոխում	Երկարությունը 7685 մմ Տրամագիծը 3658 մմ	77,60տ		2 հատ մայիս 2 հատ հունիս		4 հատ	3200	12800	կապալառու
35		Բեռնաթափում	Երկարությունը 7685 մմ Տրամագիծը 3658 մմ	77,60տ		2 հատ մայիս 2 հատ հունիս		4 հատ	3000	12000	կապալառու
36	Սեփական ծախսերի գեներատորի ԳՇՊ ռոտորով	Բեռնում	Երկարությունը 4510 մմ Բարձրությունը 2890 մմ Լայնությունը 2046 մմ	33,84տ		2 հատ մարտ		2 հատ	70	140	ՀԱԷԿ
37		Տեղափոխում	Երկարությունը 4510 մմ Բարձրությունը 2890 մմ Լայնությունը 2046 մմ	33,84տ		2 հատ մարտ		2 հատ	400	800	կապալառու
38		Բեռնաթափում	Երկարությունը 4510 մմ Բարձրությունը 2890 մմ Լայնությունը 2046 մմ	33,84տ		2 հատ մարտ		2 հատ	450	900	կապալառու
39	Տուրբոգեներատորի գրգռիչի ԲՏԳռոտորով	Բեռնում	Երկարությունը 3300 մմ Բարձրությունը 1570 մմ Լայնությունը 2540 մմ	23,65տ		2 հատ մարտ		2 հատ	60	120	ՀԱԷԿ
40		Տեղափոխում	Երկարությունը	23,65տ		2 հատ		2 հատ	200	400	կապալառու

			3300 մմ Բարձրությունը 1570 մմ Լայնությունը 2540 մմ			մարտ					
41		Բեռնաթափում	Երկարությունը 3300 մմ Բարձրությունը 1570 մմ Լայնությունը 2540 մմ	23,65տ		2 հատ մարտ		2 հատ	50	100	ՀԱԷԿ
									Ընդամենը	**117 120.0**	

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ. *1. Ներկայացված են նախնական ժամկետները՝ աշխատանքի վաղաժամկետ կատարման հնարավորությամբ*
2. Վճարումը կատարվում է փաստացի մատուցված ծառայության համար
3. Կապալառուն պետք է կազմի աշխատանքների կատարման ծրագիր (ՊՊՐ) և համաձայնեցնի այն պատվիրատուի հետ
4. Կապալառուն ժամկետների փոփոխության մասին կտեղեկացվի առնվազն 30 օրացույցային օր առաջ
*5. * - Բեռնաթափումը պետք է կատարվի պատվիրատուի կողմից նախապատրաստված հարթակի վրա*
6. Բեռնման և բեռնաթափման աշխատանքները, ներառյալ ՀԱԷԿ-ի վերամբարձ մեխանիզմները օգտագործելու դեպքում, կատարվում են Կատարողի առասանների, աշխատուժի միջոցով և տեխնիկական վերահսկողությամբ:
7. Աշխատանքների իրականացման ընթացքում անվտանգության տեխնիկայի կանոնների պահպանման համար պատասխանատու է Կատարողը:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
«ՀԱԷԿ» ՓԲԸ

Կ.Տ. **Մ. Վարդանյան**

ԿԱՏԱՐՈՂ
«Հիդրոէլեկտրամոնտաժ» ՓԲԸ

Կ.Տ. **Ս. Բաբոյան**

Հավելված N 2
«26» «01» 2018թ. կնքված
«ՀԱԷԿ-ԲՄԾՁԲ-5/17» ծածկագրով
N 03/01 պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	Ծառայության դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել ըստ ամիսների																							
			2017թ.	2018թ												2019թ.										
			դեկտեմբեր	հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	63111200	«ՀԱԷԿ» ՓԲԸ տուրբինային արտադրամասից և կայանին կից հանգույցից ապամոնտաժված գերծանր սարքավորումների տեղափոխում պահեստ																						117120000				117 120 000

Վճարումը կկատարվի փաստացի մատուցված ծառայության հանձնման-ընդունման արձանագրությունների հիման վրա:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
«ՀԱԷԿ» ՓԲԸ

Մ. Վարդանյան

Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ
«Հիդրոէլեկտրամոնտաժ» ՓԲԸ

Ս. Բաբոյան

Կ.Տ.

Հավելված 3
« » 20 թ. կնքված
ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
_____	_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝ _____
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն՝ ի դեմս _____ և
Պայմանագրի կողմը՝ ի դեմս_____, հիմք ընդունելով Պայմանագրի կատարման վերաբերյալ «____» «_____» 20 թ. կազմված՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի N եզրակացությունն այն մասին, որ Պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված ծառայությունները համապատասխանում են Պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Վերոհիշյալ ծառայությունների մատուցման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց	Ծառայությունն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 3.1
« » 20 թ. կնքված
ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը

(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը

գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն